ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«03» մարտ 2017թ. No 681 - Ա

ՍԵՐՎԻԵ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՊՐԵՍՏԱՆՍ 10ՄԳ/5ՄԳ,ՊԵՐԻՆԴՈՊՐԻԼ (ՊԵՐԻՆԴՈՊՐԻԼԻ ԱՐԳԻՆԻՆ), ԱՄԼՈԴԻՊԻՆ (ԱՄԼՈԴԻՊԻՆ ԲԵԶԻԼԱՏ), ԴԵՂԱՀԱՏԵՐ,10ՄԳ+5ՄԳ, ՊԼԱՍՏԻԿԵ ՏԱՐԱՅՈՒՄ (30)» ԴԵՂԻ 0031212ՍԵՐԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետը, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդկետի «դ»ենթակետը, Լե Լաբողատուար Սերվիե դեղագործական ընկերության 2017 թվականի փետրվարի 24-իգրությունը,«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի մարտի 1-ի թիվ 0314035917 եզրակացությունը այն մասին, որ Սերվիե դեղագործական ընկերության արտադրության «Պրեստանս 10մգ/5մգ,պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին), ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ), դեղահատեր,10մգ+5մգ, պլաստիկե տարայում (30)»դեղի 0031212 սերիան կեղծված է

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
N 06 MAR 2017 ժամ 10:00
Կից ☐ Դեղի կարգավիճակ
Նշումներ

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՆ

1. Դադարեցնել Սերվիե դեղագործական ընկերության արտադրության«Պրեստանս 10մգ/5մգ,պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին), ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ), դեղահատեր,10մգ+5մգ, պլաստիկե տարայում (30)»դեղի0031212սերիայիշրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

03.03.17 ժ. 16⁰⁰

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող, դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ անհապաղ դադարեցնել Սերվիե դեղագործական ընկերության արտադրության «Պրեստանս 10մգ/5մգ, պերինդոպրիլ (պերինդոպրիլի արգինին), ամլոդիպին (ամլոդիպին բեզիլատ), դեղահատեր, 10մգ+5մգ, պլաստիկե տարայում (30)» դեղի 0031212 սերիայի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

4.ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանվածկարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ